

եթէ այսպէս չընեն եւ չզործագրեն՝ թէ՛ Մաղբիղի յիշեալ Վարչութիւնը , թէ՛ դրացնութիւնն ու բնակիչները՝ իրենց տէրն սպանելով ամբողջներու մէջ ապաստանող զաւաճաններ ու ոճրագործներ նկատուին :

Եւ յիշեալ վեհափառ թագաւորը տէր Լեւոն անձամբ ընդունեց՝ Մաղբիղի փոխանորդներուն իրենց Վարչութեան անունով մատուցած հպատակութեան ուխտն ու հաւատարմութիւնը , այնպէս՝ ինչպէս որ յիշուեցաւ վերը :

Արդ՝ այս ամէնն որ տեղի ունեցաւ , ես՝ վերոյիշեալ քարտուղարս եւ նօսարս՝ վկայեցի յիշեալ Ապարիսիո Սանչէզի ու Դիէգո Ֆէրրանդէզի , Մաղբիղ քաղաքի փոխանորդներուն :

Վկաներ . — Արիաս Դիագ Կիյագա եւ Յովհան Գոնզալէզ , բնակիչք Վիլլարէալի , եւ Լէոնցի Ալֆոնսո Ֆէրրանդէզ , քարտուղար թագաւորին :

Սակայն այս ատենագրութիւնը պակաս մը ձգած է , պակաս մը որու մասին հետաքրքրուիլ շահեկան է մեզ համար . — Կերեւի թէ նոյն օրը Մաղբիղի պատգամաւորներն ազերսագրով մըն ալ Լեւոնէն ինդրած են , որ իրենց նոր տէրը քաղաքին ինքնավարութեան եւ անանձնաչնորհումներուն մէջ ո՛ր եւ է փոփոխութիւն չմտցնէ ու հարկեր չաւելցնէ : Ասիկա կը հաստատուի միեւնոյն օրը գրուած եւ Լեւոնի իսկական ստորագրութիւնն ու կնիքը կրող հրովարտակով մը , որ պահուած է նոյնպէս Մաղբիղի դիւանարանին մէջ , հետեւեալ թուով՝ 20, 305—60 : Լեւոնի կողմէ Մաղբիղցիներու անունով շնորհուած այս հրովարտակը , որ բամբակեայ թղթի վրայ գրուած է եւ ստորագրուած՝ թագաւորներու յատուկ կարմիր թանաքով ու կնքուած՝ կարմիր դոճի վրայ , ապահովագիր մըն է , որով Լեւոն կը հաստատէ Մաղբիղ քաղաքին հինէն ի վեր վայելած բոլոր անձնաչնորհումներն եւ կը խոստանայ նոյնութեամբ պահել քաղաքին ինքնավարութիւնը :

Ահաւասիկ այն ապահովագիրը .

### Հրովարտակ Լեւոնի Ե առ ֆաղափացիս Մաղբիղի(1)

Տէր Լեւոն , շնորհիւն Աստուծոյ , քաղաւոր Հալասանի , եւ անուէր Մաղբիղի , Վիլլարէալի եւ Անդուխաի , առ Վարչութիւն եւ քաղապետս , աղնուականս , ասպետս եւ սեպուխս որ մեր յիշեալ Մաղ-

(1) Բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document XIII.